ԳԵՂԱՄԱ ԼԵՌՆԵՐԻ «ՎԻՇԱՊՆԵՐԸ»

Դեռևս 1909 թ. Գեղամա լեռներում շրջագայելու ժամանակ ռուս ականավոր հնագետներ Ն. Յա. Մառը և Յա. Ի. Սմիրնովը հայտնաբերեցին պաշտամունքային մի շարք կոթողներ, որոնք ինչպես տեղի բնակիչներին, այնպես էլ գիտական աշխարհին ծանոթ են «վիշապներ» անունով[1]։

Որոշ ժամանակ անց «վիշապներ» հայտնաբերվեցին նաև Արագածի լանջերին[2], Ճորոխ գետի ավազանում[3] և Վրաց. ՍՍՀ Ախալքալակի շրջանում[4]։

1963 թ. սեպտեմբերին Հայկ. ՍՍՀ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական-հետախուզական արշավախումբը նորից եղավ Գեղամա լեռներում, մասնավորապես այն վայրում, որտեղ գտնվում էին Ն. Մառի և Յա. Սմիրնովի կողմից հայտնաբերված կոթողները։ Այդ հետախուզական շրջագայությունների շնորհիվ հաջողվեց հայտնաբերել ևս չորս նոր կոթողներ, որոնք չէին տեսել Ն. Մառը և Յա. Սմիրնովը[5]։

Ինչպես հայտնի է, «վիշապներ» կոչվող այս կոթողները Հայկական լեռնաշխարհից դուրս այլ զուգահեռներ համարյա չունեն։ Այդ պատճառով էլ հայ հնագիտության և պաշտամունքի պատմության համար վերոհիշյալ հուշարձանների ուսումնասիրումը, հատկապես նրանց թվագրության պարզաբանումը և առանձին մանրամասների ճիշտ ըմբռնումը առանձնակի հետաքրքրություն և գիտական արժեք են ներկայացնում։ Չի կարող կասկած հարուցել նաև այն հանգամանքը, որ պաշտամունքային այս կոթողները, որոնք Հայկական լեռնաշխարհում արդեն իսկ առանձին մշակութային օջախի արդյունք են, միաժամանակ կարող են նոր լույս սփռել այդ մշակույթը ունեցող հնագույն ցեղերի էթնիկական պատկանելության հարցի վրա։ Հավակնություն չունենալով անդրադառնալու կոթողների էությանը, նրանց նշանակությանն ու դերին, այդ հարցը թողնում ենք մասնագետներին։ Մեր նպատակն է ուսումնասիրողներին դյուրություն ընձեռելու համար հրապարակել միայն Գեղամա լեռներում հայտնաբերված կոթողները՝ անհրաժեշտ չափագրություններով և գծանկարներով։

Այդ կոթողները, որոնց թիվը այժմ հասնում է քսանի, մոխրագույն բազալտից և անդեզիտից պատրաստված ձկնակերպ և քառակող կոթողներ են ու գտնվում են Գառնի և Գեղարդ գյուղերից արևելք, բարձրադիր վայրերում, որոնք տեղացիների կողմից հայտնի են Աժդահա-յուրտ, Թոխմախան-գյոլ (կամ Վանքի գյոլ), Գյոլ-յուրտ, Իմիրզեկ, Բզովանի-յուրտ անուններով։

ԱՌԱՆՁԻՆ ԿՈԹՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԺԴԱՀԱ-ՅՈՒՐՏ

№ 1— Սա միաձույլ, մոխրագույն բազալտից կերտված ձկնակերպ կոթող է, որն ունի 3,60 մ երկարություն և իրանի տարբեր մասերում՝ տարբեր լայնություն (լայնությունը բերանի մոտ 43 սմ է, կենտրոնում՝ 55 սմ, պոչի մոտ՝ 60 սմ)։ Գլանի տրամագիծը կենտրոնում 50 սմ է։

---

[1] Н. Я. Марр и Я. И. Смирнов, Вишапы, „Труды Гос. Акад. Истории материальной культуры„, т. I, 1931, Նույնի Les Vichaps, Leningrad, 1931.

[2] Գ. Ղափանցյան, Հնության մի քանի հիշատակարաններ, «Արարատ», № 1, 1914։ Աշխ. Քալանթար, Քարե դարը Հայաստանում, «Նորք», № 5—6, Երևան, 1925։ Նույնի Գիտությունը և գիտա-հետազոտական աշխատանքները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931։ Նույնի Արագածը պատմության մեջ, Երևան, 1933, էջ 62, նկ. 21։

[3] Ատրպետ, Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929։ Նույնի Վիշապաց պաշտամունքը, «Բազմավեպ», 1931, № 7—8, էջ 308—319։

[4] Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ, Մեգալիթյան կուլտուրան Վրաստանում, Թբիլիսի, 1938 (վրացերեն։ Նույնի Вишапы и вишапоиды Грузии. „Краткие сообщения ин-та Истории мат. культуры", вып. XV, 1947, էջ 27—37։ Զուբինիշվիլի, Ամիրանիս լեռը, նյութեր Մեսխեթ-Ջավախեթի հնագույն պատմության համար, Թբիլիսի, 1963, էջ 83 (վրացերեն)։

[5] Լ. Ա. Բարսեղյան, Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Ա. Քալանթարյան, Նորահայտ պաշտամունքային կոթողներ Գեղամա լեռներից, Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1964, № 8, էջ 85—88։

Կոթողի ծայրում քանդակված է ձկան գլուխ, իր բոլոր մանրամասներով։ Իրանի վրա պարզորոշ գծագրվում են ձկան թեփուկները, խռիկները, աչքերը, քթանցքերը և բերանը։ Ձկան գլխի վրա քանդակված է գլխուղեզի վահանը։ Ձկան փորի տակը ավելի հարթեցված է և իր վրա կրում է կենդանիների մի քանի պատկեր։ Պատկերներից մեկը իրենից ներկայացնում է եզան մարմին, առաջ պարզած վերջավորություններով, որը գրավում է կոթողի մեծ մասը և նայում է դեպի ձկան գլուխը։ Ձկան գլխի մոտ քանդակված է եզան գլուխ, որի երկու կողմերում կանգնած են մեկական թռչուններ, հավանաբար արագիլներ։ Եզան դեմքի վրա պարզորոշ երևում են ականջները, աչքերը և ռունգերը, որից դուրս են ցայտում ջրի երկու շիթեր։

№ 2— Սա նույնպես մոխրագույն բազալտից քանդակված ձուկ է, որն ունի 2,60 մ երկարություն, գլխի մոտ և մարմնի կենտրոնում՝ 80 սմ, իսկ պոչի մոտ՝ 40 սմ լայնություն ու 45 սմ հաստություն։ Ձկան գլխի մասում երևում են աչքերը, քթանցքերը և բերանը։

№ 3— Ձկնակերպ այս կոթողը ունի 5,10 մ երկարություն, մարմնի տարբեր մասերում 73—55 սմ լայնություն և 35 սմ հաստություն։ Քանդակված գլուխը իր վրա պարունակում է ձկան բոլոր մանրամասների պատկերումը։

№ 4— Ձկնակերպ այս կոթողի երկարությունը 3,40 մ է, կիսագլանի նմանվող մարմինը շատ հաստ։ Ձկան բերանի մասը խիստ բութ է։ Կոթողը արտաքնապես իր վրա կրում է ձկան բոլոր մանրամասները։ Ձկան փորի տակ հարթ է և ամբողջովին ծածկված է եղ պատկերող բարձրաքանդակներով։ Բարձրաքանդակ այդ պատկերը ունի շուրջ 2,50 մ երկարություն։ Եզան պատկերը նայում է դեպի ձկան պոչը։ Այն պատկերված է ձգված, երկար և շատ բարակ իրանով, որի վերջավորությունների մի կողմում եզան գլուխն է իր մանրամասներով և առաջին ոտքերով, իսկ մյուս կողմում ետին ոտքերը ու իրանից շարունակվող երկայնաձգան ոլոր պոչը։

Պատկերը կարծես ավելի շուտ իմաստավորում է զոհաբերված ու մաշկված կենդանու մորթին, քան իրեն՝ եզին։

№ 5— Այս հուշարձանը մի քառակող կոթող է, որի երկու լայն մասերում կան եզ պատկերող բարձրաքանդակներ։ Ն. Մառը և Յա. Սմիրնովը հրապարակել են կոթողի վրայի միայն մեկ բարձրաքանդակ պատկերը, այն էլ ոչ ամբողջովին[6]։ Ըստ երևույթին, կոթողն այն ժամանակ ոչ թե կողքի է ընկած եղել, ինչպես ներկայումս, այլ մեջքի վրա։

Կոթողն ունի 2,5 մ բարձրություն, 1 մ 70 սմ լայնություն, 47 սմ հաստություն։ Բարձրաքանդակներից առաջինի վրա երևում են եզան գլուխը, ականջները, վիզը, պոզերը, ռունգերը և գլուխը պարուրող առջևի ոտքերը։ Երկրորդ բարձրաքանդակը պատկերում է եղն ամբողջովին, սակայն ընդհանուր գծագրությամբ։ Եզը պատկերված է միայն գլխով, պոզերով, ականջներով, առջևի ոտքերով, իրանի հիմնական (այն էլ ուռուցիկ) մասով և շատ երկար պոչով։

ԹՈՒՄԱԽԱՆ-ԴՅՈՒ (ԿԱՄ ՎԱՆՔԻ ԳՅՈՒ)

№ 6— Հայտնաբերվել է Համանուն լճի հատակից։ Սա 2,05 մ բարձրությամբ, 80 սմ լայնությամբ և 22 սմ հաստությամբ քար է, որն իր վրա կրում է հարթ, պրիմիտիվ քանդակագործության դրոշմ։ Կոթողի վրայի բարձրաքանդակը պատկերում է եզ։ Պարզորոշ երևում են եզան առաջին ոտքերը, նրանց միջև գտնվող գլուխը։ Քանդակագործին հաջողվել է մեկ հնարով տալ եզան գլխի ընդհանուր գծային պատկերը, նրա առանձին մանրամասներով։ Եզան ճակատից իջնում են կոր պոզերը, որոնցից վերև պատկերված են ականջներն ու վիզը։ Եզան ողջ պատկերը իմաստավորում են բարձրաքանդակ ակնախոռոչները և ռունգը։

№ 7— Գտնվում է լճի հատակում։ Մոխրագույն, չչոտ բազալտից քանդակված ձուկ է։ Այն ունի 3,40 մ երկարություն, տարբեր մասերում 70—25 սմ լայնություն։ Կոթողի վրա շատ լավ երևվում են ձկան բիրանը, աչքերը և խռիկները։ Հրապարակվում է առաջին անգամ։

№ 8— Սա կիսագլանաձև մի կոթող է, որի երկարությունը 3,50 մ է, լայնությունը՝ 85—70 սմ և հաստությունը՝ 45—30 սմ։ Կոթողի հարթ մասում, համարյա ողջ երկարությամբ քանդակված է եզան պատկեր։

Առաջին իսկ հայացքից եզը թողնում է արդեն զոհաբերված կենդանու տպավորություն, պատկերված լինելով մեջքի վրա պառկած, անկենդան ոտքերը և գլուխը մարմնի վրա ծալած։ Սակայն նրա բերանից դուրս եկող ջրի շիթը նրան կարծես կենդանություն է հաղորդում։

№ 9— Սա գլանաձև քար է, որն ունի 4 մ երկարություն, 1 մ 50 սմ լայնություն։ Գլանի վրա քանդակված է եզան մարմինը, կախ ընկած ոտքերով։ Մարմնի կենտրոնում պատկերված են երկու

[6] N. Marr et I. Smirnov, Les Vichaps, էջ 65։

իրար նայող թռչուններ, որոնք հավանաբար արագիլներ են։ Եզան գլխի մանրամասները լավ չեն պահպանվել։

№ 10— Ձկնակերպ այս կոթողը ներկայումս գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում և տեղափոխվել է Թոխմախան-գյուղից։ Այն ունի 2 մ երկարություն, 50—15 սմ լայնություն և 30 սմ հաստություն։ Ձկան իրանի վրա հազիվ նշմարվում են աչքը, բերանը և մարմնի վրայով անցնող ալիքաձև մի գիծ։

№ 11— Հայտնաբերվել է Յա. Սմիրնովի կողմից Թոխմախան լճի հենապատերից մեկի շարվածքի մեջ, խիստ կոտրված վիճակում։ Կոթողի երկարությունն է 1 մ 50 սմ, լայնությունը 50 սմ։ Կոթողի մի երեսը իր վրա կրում է մի ինչ որ խորհրդավոր գազանի սխեմատիկ պատկեր, իսկ հակառակ կողմում փորագրված են եզան մարմնի որոշ մանրամասներ։

ԳՅՈԼԻ-ՅՈՒՐՏ

№ 12— Գտնվում է Աժդահա-յուրտից 4 կմ հեռավորության վրա, Դավա-գյոզի (Նախկինում՝ Գյոլի) յուրտ կոչվող վայրում։ Կոթողն ունի 3,90 մ երկարություն, 1 մ 90 սմ լայնություն և 50 սմ հաստություն։ Բարձրաքանդակ եզան գլուխը համարյա ոչնչացված է։ Սխեմատիկ գծագրությամբ պատկերված են եզան դուրս ցցված ականջները, ականջները, պոզերը, ճակատը և ծնոտը։

№ 13— Գտնվում է նախորդ կոթողից 10 մ հեռավորության վրա։ Այս կոթողի երկարությունը 2,35 մ է, լայնությունը՝ 70—60 սմ, հաստությունը՝ 30 սմ։ Բարձրաքանդակ պատկերը ամբողջովին քայքայված է։ Սակայն պատկերի գծագրությունը հնարավորություն է տալիս պնդելու, որ այստեղ ևս եզ է պատկերված եղել։

№ 14, № 15— Գտնվում են Գյոլի-յուրտ կոչված տեղում, Աժդահա-յուրտից ոչ շատ հեռու։ Այդ կոթողները հրատարակված են Ն. Մառի և Յա. Սմիրնովի կողմից։ Դրանք մենք չենք տեսել, սակայն Գեղամա լեռների «վիշապներիթ» հավաքածուն ամբողջացնելու նպատակով այստեղ տալիս ենք նաև այդ կոթողների Մառի և Սմիրնովի նկարագրությունը։ Կոթողներից մեկը ամբողջական է և ձկան ձև ունի, իսկ մյուսը մի բեկոր է, որը երբեմնի արձանի միջին մասն է կազմում։ Այս բեկորի իրանի երկայնքով քանդակված են երեք ալեձև գծեր, որոնցից միջինի ծայրը հաստ է։

ԻՄԻՐԶԵԿ

№ 16— Գտնվում է Աժդահա-յուրտից ոչ շատ հեռու՝ Իմիրզեկ վայրում։ Սա բազալտից կերտված ձուկ է, 4 մ երկարությամբ, 70—40 սմ լայնությամբ և 40 սմ հաստությամբ։ Ձկան փորի տակ հարթ է, իսկ գլխի մասում քանդակված է եզան գլուխ, կախ ընկած ետևի ոտքերով։ Եզան բերանից դուրս են ցայտում ջրի շիթեր։

№ 17— Նույն տեղում գտնվում է մեկ այլ կոթող, կերտված մոխրագույն բազալտից, որը մեզ չհաջողվեց տեսնել։ Ն. Մառի և Յա. Սմիրնովի նկարագրության համաձայն այն ձկնակերպ է, որի փորի տակ քանդակված են եզան և թռչունների պատկերներ։

№ 18— Վերոհիշյալ կոթողի մոտ ընկած է նաև ձկնակերպ մեկ այլ արձան։ Ըստ Ն. Մառի և Ն. Սմիրնովի նկարագրության այն իր վրա կրում է չորս կենդանիների գլուխներ, որոնց բերաններից ջուր է հոսում։

№ 19— Գտնվում է Իմիրզեկից ոչ շատ հեռու, Բզովանի-յուրտի (Արտաշատի շրջանի Բզովան գյուղի ամառային արոտատեղի) շրջակայքում, Բաբա-փարի կոչվող վայրում։

Այս կոթողը բազալտե մի հսկայական ձուկ է 5,20 սմ երկարությամբ, 90—50 սմ լայնությամբ, 2,25 սմ շրջագծով։ Ձուկը քանդակված է իր բոլոր մանրամասներով։ Նրա վրա երևում են բարձրաքանդակ բերանը, աչքերը, խռիկները, թեփուկները և լողանները։

№ 20— Վերը նկարագրած կոթողից ոչ շատ հեռու ընկած է 4,10 սմ երկարությամբ, 73—60 սմ լայնությամբ և 80 սմ հաստությամբ մեկ ուրիշ ձուկ, որի վրա պարզորոշ երևում են բերանը, աչքերը, խռիկները, թեփուկները և լողանները։

Լ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ






№7
№8
№9


№ 11
№ 12
№ 13
№ 14
№ 15
№ 16
0 20 100

№17



№18



№19



№20

«ВИШАПЫ» ГЕГАМСКИХ ГОР

Л. А. БАРСЕГЯН

(Р е з ю м е)

Еще в 1909 г. Н. Я. Марром и Я. И. Смирновым на Гегамских горах были обнаружены каменные стелы, получившие в специальной литературе название «вишапов». В 1963 и 1967 гг. в Гегамских горах побывала разведочная экспедиция Института археологии и этнографии АН Армянской ССР. Во время этих работ были обнаружены еще пять новых «вишапов».

Ниже публикуются все обнаруженные на Гегамских горах «вишапы», с их обмерами, рисунками и описанием.

Изучение каменных стел-«вишапов» представляет большой научный интерес, связанный с идеолого-мифотворческим представлением древних жителей Армянского нагорья.